# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 8 | Հոկտեմբեր | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 1 | Հոկտեմբեր | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 6551482395 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [10] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [16] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [18] Լրացուցիչ տվյալներ | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 181635 19 բ/գ, | հատ | 1 | 39400 | 39400 |
| Ընդամենը | | | | | 39400 |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

08/10/2019 11:53:37

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

15 օգոստոսի 2019թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Աննա Սերգոյանս, քննարկելով վարույթումս քննվող 18163519 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Շինարարների փողոցի 1-ին նրբանցք 14 տան բնակիչ Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը իրենց տան բակում կատարել է խուլիգանություն՝ առանց որևէ պատճառի թակել է հարևանությամբ բնակվող Սոնյա Ռազմիկի Դարբինյանի տան դուռը և թակոցներին արձագանք չստանալով, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ՝ շուրջ 30 րոպե տևողությամբ անհասցե բարձրաձայն հայհոյանքներ է հչեցնել, աղմկել, գոռգոռցել, որի հետևանքով խախտվել է Գյումրի քաղաքի Շինարարներ փողոցի բնակիչների, ինչպես նաև Սոնյա Ռազմիկի Դարբինյանի և Աստղիկ Արշալույսի Մինասյանի հանգիստը և անդորրը:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնում 21. 06.2019 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18163519 քրեական գործը և ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն:

<<Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից>> ստացված թիվ 362 գրության համաձայն՝ Վ. Հ. Մինասյանը /ծնված 12. 05. 1984թ/, 2003 թվականի դեկտեմբերի 3-ից գտնվում է հաշվառման մեջ <<Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, վարքային փոփոխություններ, բարդացած կենցաղային ալկոհոլիզմ, թափառաշրջիկություն>> ախտորոշմամբ:

2019 թվականի օգոստոսի 15-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18163519 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-

ա/ Մեղադրյալ Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ և երբվանից:

բ/ Եթե Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:

դ/ Եթե Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատավարական գործողություններին:

ե/ Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

զ/ Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը և կարող է արդյոք իր հոգեկան վիճակով պայմանավորված մասնակցել դատավարական և քննչական գործողություններին:

3. Փորձագետներին պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Վլադիմիր Հովհաննեսի Մինասյանը:

**Քննիչ՝** **Ա.Ա.Սերգոյան**